Հավելված 1
Հայաստանի Հանրապետության
մարդու իրավունքների պաշտպանի
2022 թվականի հունվարի 3-ի
N 45-Ն որոշման

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանին առընթեր հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության հարցերով հասարակական խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) կազմավորման և գործունեության կարգը, նպատակը, խնդիրները, գործառույթները, խորհրդի կարգավիճակը, խորհրդի անդամների լիազորությունների կասեցման և դադարեցման հիմքերը:
2. Խորհուրդն իր գործունեության ընթացքում առաջնորդվում է ՀՀ օրենսդրությամբ, այդ թվում՝ սույն կարգով:
3. Խորհուրդը գործում է օրինականության, արդարության, անկողմնակալության, հրապարակայնության, քաղաքական զսպվածության, խտրականության բոլոր դրսևորումների բացառման սկզբունքների հիման վրա:
4. Խորհուրդը գործում է հասարակական հիմունքներով որպես խորհրդատվական մարմին՝ սույն կարգով սահմանված գործառույթների ծավալով:

ԳԼՈՒԽ 2. ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

5. Խորհուրդը ձևավորվում է հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության բնագավառում անհրաժեշտ փորձ՝ ունեցող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից և անկախ մասնագետներից:
6. Խորհուրդը ձևավորվում է հասարակական կազմակերպություններից և անկախ մասնագետներից:

7. Խորհրդի անհատական կազմը հաստատվում է Պաշտպանի որոշմամբ:
8. Խորհուրդն ի պաշտոնե ղեկավարում է Պաշտպանը:
9. Խորհուրդը բաղկացած է ոչ պակաս, քան 5 անդամից և ոչ ավել, քան 20 անդամից:
10. Յուրաքանչյուր հասարակական կազմակերպություն Խորհրդում կարող է ունենալ միայն մեկ ներկայացուցիչ:

ԳԼՈՒԽ 3. ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄԻՆ ԱՌԱՋԱԴՐՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

11. Խորհրդի անդամ կարող են լինել.
    1) ըստ կանոնադրության և/կամ գործունեության շրջանակի՝ բացառապես կամ հիմնականում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության ոլորտում, մասնավորապես, հաշմանդամություն ունեցող անձանց ծառայություններ մատուցման և/կամ ուղղակիորեն հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերող քաղաքականության և կանոնակարգման խնդիրների ոլորտում առնվազն 2 տարվա ոլորտային փորձ ունեցող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ,
    2) առնվազն 2 տարվա ոլորտային փորձառություն ունեցող անկախ մասնագետ, ովքեր մասնակցել են հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության ոլորտին առնչվող ծրագրերի, փորձագիտական աշխատանքների իրականացմանը:

ԳԼՈՒԽ 4. ԽՈՐՀՐԴԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

12. Խորհրդի նպատակը հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության ոլորտում Պաշտպանի գործունեությանն աջակցելն է՝ որպես խորհրդատվական մարմին:
13. Խորհրդի խնդիրներն են՝
    1) աջակցել Պաշտպանին հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության ոլորտում գործունեություն իրականացնող քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ համագործակցության բարձրացմանը.
    2) նպաստել հաշմանդամության ոլորտում մարդու իրավունքների վիճակի անընդհատ բարելավմանը, ներառյալ՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության արդյունավետության բարձրացմանն ուղղված հետազոտությունների, ուսումնասիրությունների կամ վերլուծությունների իրականացումը, համակարգային խնդիրների վերհանումը և դրանց հիման վրա Պաշտպանին առաջարկներ ներկայացնելը:

ԳԼՈՒԽ 5. ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

14. Խորհրդի անդամը կարող է իրականացնել սույն կարգով նախատեսված խնդիրներից բխող գործառույթներ:
15. Խորհրդի անդամը կամ Խորհրդի նիստերին մասնակցող անձը չի կարող՝
    1) առանց Պաշտպանի համաձայնության հրապարակել Խորհրդում քննարկված հարցերի վերաբերյալ տեղեկությունները.
    2) Խորհրդի նիստերի ընթացքում հայտնի դարձած տեղեկությունները տրամադրել որևէ կազմակերպության կամ անձի, դրանք օգտագործել անձնական կամ այլ նպատակներով.
    3) Խորհրդի անդամի կարգավիճակից բխող դիրքն օգտագործել Խորհրդի գործունեության շրջանակներից դուրս այլ գործողություններ իրականացնելու նպատակով.
    4) իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը կամ սույն Կարգին հակասող գործողություններ:
16. Խորհրդի անդամն իրեն վերապահված գործառույթները կարող է իրականացնել միայն սույն Կարգով նախատեսված նպատակի և խնդիրների իրականացման համար:

ԳԼՈՒԽ 6. ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԸ ԵՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

17. Խորհրդի նիստերը հրավիրվում են առնվազն երեք ամիսը մեկ անգամ, որոնք վարում է Պաշտպանը: Պաշտպանի բացակայության դեպքում՝ նրա հանձնարարությամբ Պաշտպանի աշխատակազմի Քաղաքացիական, սոցիալ-տնտեսական և մշակութային իրավունքների պաշտպանության դեպարտամենտի ղեկավարը կամ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության բաժնի ղեկավարը:
18. Խորհրդում կարող են քննարկվել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների վիճակի վերաբերյալ ինչպես տեղական հասարակական կազմակերպությունների, այնպես էլ միջազգային կազմակերպությունների զեկույցները կամ հաշվետվությունները, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության ապահովման հարցերը, միջազգային և եվրոպական կառույցներում բարձրացված խնդիրները և ոլորտին առնչվող այլ հարցեր:

19. Խորհրդի նիստերը, որպես կանոն, անցկացվում են դռնփակ: Պաշտպանի որոշմամբ՝ Խորհրդի նիստերը անցկացվում են նաև դռնբաց, որոնց կարող են ներկա գտնվել զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ:
20. Խորհրդի անդամներից բացի, Խորհրդի նիստերին կարող են մասնակցել Պաշտպանի աշխատակազմի իրավասու ներկայացուցիչներ:
21. Խորհրդի նիստերին կարող են հրավիրվել համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ Խորհրդի անդամ չհանդիսացող այլ հասարակական կազմակերպություններ և փորձագետներ, հաշմանդամություն ունեցող անձինք և/կամ նրանց ընտանիքների անդամները, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ և այլ շահագրգիռ անձինք:
22. Խորհրդի անդամները նախապես տեղեկացվում են նիստի օրակարգի մասին:
23. Խորհրդի անդամները նիստերի ընթացքում ազատ են իրենց դիրքորոշումը գրավոր կամ բանավոր ձևով արտահայտելու հարցում:
24. Խորհրդի օրակարգը ձևավորվում է Պաշտպանի և/կամ անդամների առաջարկությունների հիման վրա:
25. Պաշտպանը որոշում է Խորհրդի նիստի անցկացման օրը, վայրը, ժամը:
26. Խորհրդի գործունեության կազմակերպական-տեխնիկական աջակցությունն ապահովում է Պաշտպանի աշխատակազմը: Խորհրդի նիստի վերաբերյալ կազմվում է արձանագրությունը, որն էլեկտրոնային եղանակով ուղարկվում է Խորհրդի անդամներին:

ԳԼՈՒԽ 7. ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՍԵՑՈՒՄԸ ԵՎ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

27. Խորհրդի անդամի լիազորությունները դադարեցվում կամ կասեցվում են Պաշտպանի որոշմամբ կամ Խորհրդի անդամի դիմումի համաձայն:
28. Խորհրդի անդամի լիազորությունները կարող են վերականգնվել Պաշտպանի որոշմամբ, եթե վերացել են անդամության կասեցման հիմքերը:
29. Խորհրդի կազմում անդամի լիազորությունները կարող են դադարեցվել Պաշտպանի որոշման համաձայն հետևյալ դեպքերում.
    1) Խորհրդի նիստերին երեք անգամ հաջորդաբար անհարգելի բացակայելու դեպքում.

2) Խորհրդի անդամին առաջադրվող պահանջներին չհամապատասխանելու վերաբերյալ նոր փաստերի առկայության դեպքում.
3) Խորհրդի անդամի լիազորություններն իրականացնելիս ՀՀ օրենսդրության կամ սույն կարգի պահանջները խախտելու դեպքում.
4) Խորհրդի անդամի նկատմամբ դատարանի օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճռի առկայության դեպքում,
5) Խորհրդի անդամի երկարատև հիվանդության դեպքում, որի հետևանքով անդամի պարտականությունները կատարելը դառնում է անհնար,
6) Խորհրդի անդամի մահվան դեպքում, եթե Խորհրդի անդամ հասարակական կազմակերպության դեպքում նոր ներկայացուցիչ չի առաջադրվում:

30. Սույն Աշխատակարգով չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են Պաշտպանի որոշումներով:

ԳԼՈՒԽ 9. ԽՈՐՀՐԴՈՒՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՈՒՄԸ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ, ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ

31. Խորհրդում քննարկված հարցերի վերաբերյալ տեղեկատվությունը տարածվում և հրապարակվում է Պաշտպանի աշխատակազմի հասարակայնության հետ կապերի համար պատասխանատու ստորաբաժանման կողմից:
32. Խորհրդի նիստերին վերաբերող տեղեկատվությունն ու փաստաթղթերը տրամադրվում են Խորհրդի բոլոր անդամներին վերջիններիս ցանկությամբ:

ԳԼՈՒԽ 10.
ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

33. Սույն Կարգում փոփոխություններ և լրացումներ կատարվում են Պաշտպանի որոշմամբ:

Հավելված 2
Հայաստանի Հանրապետության
մարդու իրավունքների պաշտպանի
2022 թվականի դեկտեմբերի 3-ի
N 45-Ա որոշման

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Կազմակերպություն /անկախ փորձագետ	**Խորհրդի անդամ**
«Ագաթ» հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանության կենտրոն ՀԿ	Կարինե Գրիգորյան
««Արև երեխաներ» երեխաների առողջության և զարգացման կենտրոն» ՀԿ	Տեր Գրիգոր քահանա Գրիգորյան
«Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամ	Շուշան Դավթյան
Աուտիզմի ազգային հիմնադրամ	Լիլիթ Աթաջանյան
«Հույսի Կամուրջ» հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների իրավունքների պաշտպանության ՀԿ	Սուսաննա Թադևոսյան
«Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» ՀԿ	Անուշ Ասլանյան
«Մենք Կարող ենք» մտավոր խնդիրներ ունեցող երիտասարդների,երեխաների և նրանց ընտանիքների շահերի պաշտպանության ՀԿ	Արմինե Սահակյան
անկախ փորձագետ	Հայկ Մկրտչյան
անկախ փորձագետ	Արփի Ասատուրյան
«Զինվորի Տուն» բարեգործական ՀԿ	Հայկուհի Մինասյան
«ԷԽՈ» իրավապաշտպան ՀԿ	Սերյոժա Օհանջանյան
«Լիարժեք կյանք» ՀԿ	Սուրեն Մաղաքյան
«Լուսաստղ» բարեգործական հասարակական կազմակերպություն	Անի Գաբրիելյան

«Լուսէ վերականգնողական կենտրոն» հիմնադրամ	Գոհար Գալսյան
«Լռության ձայն» ՀԿ	Արտաշես Հովհաննիսյան
«Հավասար» կրթական հիմնադրամ	Ամալյա Հարությունյան
«Հաշմանդամ անձանց սեղանի թենիսի հայկական ֆեդերացիա» ՀԿ	Կամո Դավթյան
«Հատուկ կարիքներով մարդկանց աջակցության «Ունիսոն»» ՀԿ	Արմեն Ալավերդյան
Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ	Մարիետա Թեմուրյան
«Սատար» հաշմանդամների ՀԿ	Հունան Հունանյան